


Կուսակցական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 9



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կիւր



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ هانراكيداق HANRAKIDAGUE
 ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 9 ||

1 ՄԱՐՏ 1903



ԱՌ ՕՐ. Թ... Գ...



Տողեր կ'ուզեմ որ գրեմ ալպոմիդ մէջ, Օրիո՛րդ,
 Տողերուն մէջ ի՞նչ գրեմ, մերի՞կն անհու՛ն՝ յո՛ւրդ,
 Թէ քրքրուն երազներն հակօս ներել սեղմուած
 Կամ իմ կուրծքիս հուրն ու հեւք զոր սահմանեց ինձ Աստուած:



Շատեր ծաղիկ կամ բառեր դրած են հոն պերճազարդ,
 Չունիմ սակայն ես ծաղիկ եւ ոչ շինծու ցուրտ մի վարդ,
 Կրակոս հոգի մ'ունէի, ես գայն դրի անոնց մէջ
 Հրդեհ դրի, շու՛նչ դրի, պաշտո՛ւմ մ'անհուն, սէր մ'անեւջ:



Կ'ըսէի ինծի, թէ երբեմն դուք այս քերթեր թղթաւէի
 Ա՛հ, երբ հասնիք այս էջին, աչքով մտնով մի դաւէի.
 Կուրծքերնուդ վրայ դրե՛ք լոկ ու ըզզացե՛ք գայն սրտով
 Հոն չեմ դրած բառ ու վանկ, այլ կեանք մ'ամբողջ հոգեխառով:



Գացե՛ք, տղերս, թէ կրցայ ձեր մէջ դնել ափ մը շանթ
 Փոքորկեցե՛ք այդ շանթով ներս հոգին աղամանդ
 Գացե՛ք յուզել, մահնին մէջ, արեալոյսին շողին հետ
 Մահուր՝ շուշան իր հակօին վարդ թաղոց ծրփան վէտ:



Եւ երբ դառնամ ես տարսամ մի յիշատակ իր գանկի,
 Դուք կայծ մ'եղե՛ք, կրակեցե՛ք իր գանկն ամբողջ թող բռնկի,
 Որ վառ ըլլայ յիշատակս, ինչպէս ծայիսն իր շրթանց
 Որոնք հրմայն են երկնից եւ ցոլեւու անհուն գանձ:



26 Մայիս 1896

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴՍՍՑԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՋ

Հնդկաց մեջ. — Պոլստոյականութեան ընդհանրացումէն վերջ, Հնդկի միտքը անտարբեր գտնուած չէ իր զաւկին կրթութեանը մասին: Նա հաւաքելով ժողովրդի զաւակը գեղաստուներ ծառերու տակ, բնութեան կենսատու ծոցին մէջ հարկաւոր հրահանգումները կուտար, ուր տղայք այն ակնածանքն ու մեծարանքը ունէին հանդէպ ուսուցչին ինչ որ կը տածէին Պոլստոյի համար: Ազատ օդ, ազատ շող, ազատ շարժում, ազատ զգեստ եւ երկուստեք բոլորանուէր զգացում. քանի՜ բաղձալի բաներ այսպիսի նրուիրական գործի մը մէջ: Սոյն աւանդուած կրթութիւնը մասնաւոր դրոշմը կը կրէր դասակարգի եւ համայնաստուածութեան, որով պատանին իր ապագայ ընկերական վերաբերումներուն մէջ պիտի յարգէր անջրպետները, որք ընկերութեան զանգուածին մէջ բացուած էին, եւ կրօնական համոզումներովը ամէն իրի եւ երեւոյթի տակ աստուածութիւն մը պիտի նշմարէր: Ահա՛ տըրուած կրթութեան երկու շեշտերը որք կը բնորոշեն Հնդկի դաստիարակութիւնը:

Պատանին կանուխէն կը ներշնչուէր կուրօքէն հպատակիլ համայնքին եւ կրօնի, ու միանգամայն կը դրուէր խելապատակին մէջ իտէալը՝ քուրմ մը ըլլալու, որուն հասնելու համար ճամբան այնքան հարթ չէր: Ըմբոստ մանուկներ ճոպանի հարուածներուն եւ քրտնեցուցիչ տաժանքներու ենթակայ կ'ըլլային: Կինը՝ բացարձակ գերին, էրկան, երբեք բաժին չունէր կրթական խնդիրէն. արական սեռին ալ արգելուած էր որ եւ է խուզարկում մը կամ հարցասիրում մը ընելու, իր մէն մի արտայայտութիւնը հեղինակի մը կնիքը պէտք էր որ կրէր, հետեւաբար զարմանալու չէ այն լճացումին ու նեխումին վրայ որք երկար դարերու տակ մնացին անփոփոխ: Քուրմը ոչ թէ առջեւը կեցած միտքը կը վարէր, կը մշակէր եւ կը սերմանէր, այլ սոսկ կ'առաջնորդէր ու կը լեցնէր. որուն մէջ աշակերտին բաժինը՝ ընդունիլ, հետեւիլ, հիանալ եւ հաւատալ էր:

Հրեից մեջ. — Եահվէյի աս ընտրուած ժողովուրդը եւս իրեն յատուկ կրթական ուղղութիւնը ունէր: Սկիզբէն հասարակաց դպրատեղի չունէին, մասնաւորներ իրենց տանը մէջ կ'ընդունէին մանուկները եւ կ'ուսուցանէին գրել եւ կարդալ. յետոյ այս եղա-

նակը տեղի տուաւ հանրային հաստատութիւններու որք կը գըտնուէին յատուկ քաղաքներու եւ վանանման բարձրագիւր շէնքերու մէջ. սոյն բարեփոխում հետը բերաւ նաեւ բնական պատմութեան, աստղաբաշխութեան եւ երկրաչափութեան ուսումներու աւանդումը, ու բարոյական բաժնին մէջ Եհովայի բացարձակ հրեշտակներու, հարց օրէնքին ու սովորութիւններուն խտապահանջ գործադրումը: Մանուկ միտքը կը նախապաշարէին մթութիւն, դարչութիւն եւ վայրենիութիւն տեսնել ու հեռատեսել Պաղեստինի անձուկ հորիզոնէն անդին: Ինքնամփոփ, ինքնահաւան, ինքնաբաւական եւ այլատեսաց հանգամանքը հրէա-դաստիարակութեան, քիչ զօրեղ պատճառ մը եղած չէ սոյն ժողովուրդին յետադիմութեան: Երբ Աթէնք, Հռոմ, Բաբելոն հըսկայ եւ փառաւոր էջեր կը պարզէին յառաջդիմութեան մատենին մէջ, իրենք անլուր անոնց անցուդարձերէն, ո՛վ գիտէ ինչ խեղճ ու կլակ գաղափարներ կը տածէին: Միայն տղայք կ'ուսանէին. թէեւ երբեմն իգական սեռէ անհատներ մասնակից կ'ըլլային եւ կը յառաջանային: Իմացական զարգացումը ընդհանուր չէր: Կրօն ու ծննդավայրը, օրօրոցէն մինչեւ դաճաղ կրկնուած ու շեշտուած բառերն էին: Քրիստոսի Ա. դարուն պարտաւորիչ եւ ընդհանրական եղաւ դպրոցի աշակերտումը:

Իւրաքանչիւր 25 աշակերտի մէկ՝ եւ 40 աշակերտի երկու ուսուցիչ իբր օրէնք հաստատուեցաւ: Քաղաքին կամ երկրին ճշմարիտ պահապանները միայն ուսուցիչները կը նկատուէին, խորհելով թէ անոնք մատղաշ սերունդին մէջ ապահովութեան սերմերը կրնան ցանցնել. ուստի ուսուցիչները մեծ յարգանքով կը պատուընէին: Թալմուտ ուժեղ շեշտով կը պատուէրէ. «Եթէ ուսուցիչդ ու ծնողքդ քեզ կարօտին, նախ ուսուցչիդ օգնէ՛, քանզի առաջինը մինչ միայն աշխարհի կեանք տուած է, վերջինը քեզի համար ապագայ կեանք մը ապահոված է»: Ամէն ուսուցիչ պարտաւոր էր ամուսնանալ որպէսզի բարոյական որ եւ է անհաճոյ երեւոյթ կամ պատահում տեղի չունենար որ մանկան նորաչէն խառնուածքը փլէր կամ քայքայէր. եւ թէ ամուսնացեալ անձ մը միայն կրնար տածել հայրական գուրգուրանքը որ պէտք էր դպրոցավարութեան մէջ: Դարձեալ Թալմուտ կը պահանջէր որ «Մանուկը վեց տարեկան ըլլալէ վերջ դպրոց խրկուի ու անոր պարանոցին վրայ օրէնքի լուծը դրուի, ինչպէս եզան փայտեայ»: Տղաքը կը պատժէին փայտով, հացէ զրկելով եւ փոկով: Ատնց մէջ ալ խուզարկումի եւ հնարումի ազատ ոգին չէր մշակուէր: Մինչեւ որ արտայայտուելիք գաղափարին ետեւը կամ տակը հեղինակ կնիք մը չի գտնուեր չէին կրնար հրապարակել:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՁ

30. — Սրսոսութեան սովորութիւնը

Փոքրիկ աղջիկ, դուռն կ'ըսես, «Արիութիւնը այրերու համար է, մենք քաջարտութեան պէտք չունինք» :

Կը խարուիս, փոքրիկ աղջիկ, ընդհակառակը շատ պէտք ունիս անոր. ո՛չ թէ այս վայրկենիս՝ այլ երբ մեծնաս : Դու երբեք չգիտես, թէ քու կամ ընտանիքիդ ի՞նչ պիտի գայ, թերեւս ամենածանր հիւանդութիւն մը : Պէտք է զանոնք կրել կարողանաս առանց տկարանալու : Ասոր համար հիմակուրնէ վարժուէ :

Կատարէ ընտանեկան պարտականութիւններդ առանց գանգատելու, որչափ ալ դժուար ըլլայ : Համբերութեամբ տար փոքր ցաւ մը, վէրք մը, նեղութիւն մը առանց շարունակ աղմկելու եւ արտասուելու : Գործդ ամբողջովին կատարէ առանց ասդին անդին ձգելու : Եթէ ցաւ կամ վիշտ մը ունիս, ջանայ աղմկալից կերպով չիյայտնել : Եթէ ընտանիքիդ մէջ դժբաղդութիւն պատահի, առանց արտասուքի մասնակցէ : Վերջապէս յիշէ որ արիութիւնը տարափոխիկ է : Եթէ դու արիասիրտ ես, քու շուրջիններդ ալ այնպէս կը լինին :

31. — Լաւ հպարտութիւնը

Երբեմն կ'ըսէք . « Այս ինչ փոքրիկ աղջկան տունը գացի, նա շատ հպարտ է : » Այսպէս խօսելով ըսել կ'ուզէք, թէ ամբարտաւան եւ արհամարհող է եւ ստուգիւ այս նշանակութեամբ իր հպարտութիւնը ծաղրելի է եւ տարօրինակ :

Բայց կայ լաւ հպարտութիւն մը, իրաւացի եւ արդար հպարտութիւն մը, որ ամէնուն ներելի է :

Ահա՛, օրինակի համար, այրիացած կին մը, էր իր տղաքը մեծցուցած է նեղութեամբ եւ պատուաւոր կերպով, ըրածին վրայ կը հպարտանայ եւ իրաւունք ալ ունի : Տղայ մը հպարտ է, եւ իրաւունք ունի դժուար աշխատանք մը կատարելով . ջանասիրութեամբ եւ յարատեւութեամբ : Աղքատ մէկը չուզեր ողորմութիւն ընդունիլ, բայց գործ կը խնդրէ պէտք եղած դրամը շահելու համար . կը հպարտանայ ասոր համար, իրաւունք ունի : Դարձեալ ,

եթէ յաղթեցիր պակասութեան մը, որուն համար քեզ կը յանդիմանէին, եթէ չարիք գործելու միտումին յաղթեցիր, իրաւունք ունիս հպարտանալու : Ահա լաւ հպարտութիւնը : Լաւ հպարտութիւնը, արժանապատուութիւն է, բայց պէտք չէ որ այս զգացումը դուրսէն յայտնուի :

Ներելի է ըրած բարիքիդ համար հպարտանալ, բայց այս ըզգացումը պէտք է որ սրտիդ մէջ ծածուկ մնայ :

32. — Լաւ խոսք

Հին պատմութիւն մը, որ թերեւս կարդացած լինիք, մեզի կ'ըսէ :

Երկու կին օր մը չուկան կ'երթային բանջարեղէն ծախելու համար : Ծամբան երկար էր, օդը շատ տաք եւ կողովները ծանր էին : Կիներէն մին շարունակ կը գանգատէր. միւսը առանց տրտնջալու ճամբան կը շարունակէր :

Գանգատողն ըսաւ միւսին. « Ուրեմն բան չունի՞ս կողովիդ մէջ որովհետեւ ծանր չթուիր եւ դու չես գանգատիր » — Ո՛հ, այո՛, պատասխանեց միւսը, իմ կողովս ալ քուկինիդ նման լեցուած է, բայց տարած բանջարեղէններուս մէջ սքանչելի խոտ մը դրի : Այս խոտը Համբերութիւն կ'անուանուի, ան ինձ կ'օգնէ քաջութեամբ ճամբաս երթալ :

Կը հասկնա՞ք այս առածը, այնպէս չէ՞ : Առանց համբերութեան կարելի չէ կատարելագործուիլ. որովհետեւ ասոր համար ամէն օր պէտք է մարդ իր վրայ հսկէ եւ այս համբերութեան գործ է :

33. — Նախաձեռնութեան ոգի

Երբեմն կը լսէք թէ. « Հօր, մօր եւ անդրանիկ քրոջ նախաձեռնութեան շնորհիւ աղքատութեան մէջ ինկած ընտանիք մը կրցաւ քիչ շատ վերականգնիլ եւ աւելի պակաս խեղճութիւն կրել » : Այս ի՞նչ կը նշանակէ : Այս կը նշանակէ թէ, այն ընտանիքին մէջ մէկը՝ հայրը, մայրը, եղբայրը կամ քոյրը դժբախտութենէ վհատած չէ, եւ հնարը գտած է օգտակար ըլլալու իր շուրջը գտնուողներուն : Սպասած չէ, որ իրեն աշխատելու գործ բերեն, ինքը հետամուտ եղած է իր սեպհական կամքով այնպիսի պարագայներ ստեղծել, որ իրեն գործ հայթայթեն. նախաձեռնութեան հոգի ունեցած է :

Թերեւս ըսէք, « Այնպէս ըրաւ, որովհետեւ մտացի էր և ամէն ուզող մտացի չկրնար ըլլալ » : Տղա՛ք, բնաւ մի՛ հաւատաք

ասոր: Մարդուս դէպի իրենները ունեցած սէրը, զանոնք երջանկացնելու փափաքը, կամքի զօրութիւնը, ահա՛ ասոնք նախաձեռնութեան ոգի կուտան: Երբ որոշում մը տալու պէտք ունենաք, ձեր սրտին հետ խորհրդակցեցէք: Նա ձեր ամենալաւ խորհրդատուն է:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ԽԱՂԻՒՆԵՐԸ

Ծաղիկները կը դողդղան, կը վառին,
Կապոյտ հովերն կ'զգուեն զանոնք տարփալի:
Սիրահարներ՝ մեռնող գիշերն քով քովի,
Թարմ մարմիններ՝ ծաղիկ աչքով խնկային:

Խած նայուածքներ, վառող մոմեր զաղջ, թոնով,
Կը կարմրին, վար կը նային ամէկոտ.
Սրուակները—Սէրի սենեակ մշկահոտ—
Կը փլչին մերթ, ու կը շինուին ցօղերով:

Բուռվարումներն իրենց փափուկ, փայփայուն,
Աղօթքներու մէջ կը փաթեն զմեզ միշտ,
Ու մենք կապուած իրենց, շրդարշ թերթերուն
Դգուանքին տակ կ'իյնանք գինով միշտ անվիշտ:

Մենք սփոփանք կ'զգանք իրենց արցունքէն,
Երբոր կուլան, արցունքներու բաժակ դարձած.
Շուշան շունչեր մխալով մերթ լուրջօրէն,
Վարանումի օրրումներով արբեցած:

Մեր տենչանքն են անոնք բացուած հըրայրբով,
Սիրել տուող գեղեցկութեան ջինջ հոգին,
Ըլան կարմիր եւ կամ հերմակ կամ դեղին,
Պիտի խօսին լեզուն աղօր պարիկին:

Սուրբ մարմիններ՝ շղարշներու պէս նրբին,
Ջարդարանքն էք սիւռոյ, ժպտի, տրտմութեան,
Այն լոյսերն էք ուրկէ սիրտերն կը լեցուին՝
Յոյսի չքնաղ բաբախիւնով սուրբ զարնան:


ԿԱՐԷՆ



Կը սիրէր Վիրժին
Ոսպէ ապուրը,
Եփած՝ մօրքուրին
Լաւ կերակուրը:
Օր մը որ այսպէս
Ամանը ձեռքին

1.

Տուն կուգար, գիտե՞ս,
Խնդալով Վիրժին,
Անդիէն շուն մը՝
Ապուրին հոտէն
Հնէքը բերանը
Երեցաւ մէկէն:



2.

Շունն ետին ինկաւ,
Եւ Վիրժին իոկոյն
Միտքը հասկըցաւ
Ծակ աչք կենդանոյն:
Ապուրը մէկ դի
Առաւ ու փոխեց

ձամբան, մէկալ դի
Դարձուց, արտորաց:
Խելքովը, ասանկ
Որ ընեմ, կ'ըսէր,
Ապուրը տաք տաք
Տուն տանէր ուտէր:



Բայց չար կենդանին
Այնչափ մօտեցաւ,
Որ ալ խեղճ վիրժին
Պօռալ սկսաւ,
Ապուրն ամանով
Հեռու կը տանէր,

3.


Զի շունն իրեն քով
Շատ մօտ էր հասեր:
Շունն քսես անհոգ
Որսին հետամուտ,
Վեր առեր իր ոտք
Կը կաղկանձէր շուտ:



4.

Ալ ճարը հատաւ
Փոքրիկ աղջկան,
Մէկ ձեռքով տուաւ
Հարուած մ'այն չար շան:
Իսկ միւս ձեռքէն
Ապուրն է վրան


Կը թափէր մէկէն,
Արդ ի՞նչ ընէ ան.—
Ճար չկայ, բան մը
Որ եկաւ ցլխուն.
Ազատէ ո՞րը,
Ապուրը թէ շունը:



5.

Վա՛յ, ինկաւ գետին
Ապուրն ամանով,
Ձեռքերը զլխին
Կը զարնէր լալով .
Եւ շունն արտօրնօք
Հափէր կը լիզէր

Մեծ ախորժանօք .
Ուզածն ալ այս էր. —
Որսն ընելէն ետք
Ալ ի՞նչ սպասէ
Իր ինչո՞ւն էր պէտք
Թաղջիկն արտասուէ:



6

Աչքերն արցունքով
Տուն վազեց իսկոյն,
Եւ գնաց մօր քով,
Ինչ որ իր զլխուն
Եկած էր պատմեց.
Մայրը պատրաստեց

Ապուր մը խիստ լաւ,
Որ նստաւ կերաւ.
Բայց մտքէն չելաւ
Օրուան չարիքը,
Ձը մոռցաւ ըրնաւ
Մօրը բարիքը:

« Ծաղիկներու Լեզուն » խորագիրը եւ 1882 թուականը կրող Ֆրանսերէն գրքի մը հետեւողութիւնով՝ կը գրենք այս՝ եւ ասոր հետեւիլի յօդուածները: Շատ մը տեղերու բառական քարգմանութիւնը պիտի ներկայացնենք, տեղ տեղ ազատօրէն պիտի քարգմանենք եւ շատ տեղեր ալ կրնասելով՝ կամ եթէ պէտք ըլլայ՝ յաւելումներ պիտի ընենք:

ԳԼԱԿ ՀԻՆԵՆՑ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ը

Ամէն մարդ կը սիրէ ծաղիկները:

Երբ գարունը կը յառաջանայ, եղբեւանիներու պսակը ճակատին վրայ, երբ մարգերը հագած են իրենց կանանչի վերարկուն՝ զատկածաղիկներով ասաղաչարուած, եւ երբ կոկոնները կը բացուին Ապրիլի դաղ շունչին տակ, չպիտի՞ ըսէինք թէ բնութիւնը առաջին անգամ կ'ողջունէ կեանքը, եւ թէ՛ անիկա շատոնց գոցուած իւր ծոցէն վերջապէս դուրս կ'արձակէ իր գանձերը ճոխութեան եւ սիրոյ . . . :

Ամէն մարդ կը սիրէ այն ատեն եւ կը զուարթանայ:

Խօլ գեփիւռներ կը սուրան պուրակէ պուրակ, թռչունները կը ճռուողեն կանանչ ոստերու վրանին ներքեւ, վտակները կ'երգեն իրենց նուրբ ազագի եւ ճերմակ կայծքարերու անկողին վրայ, եւ ծաղիկները, ցերեկի այս լուսաւորները, փոցաճաճանչ ապարօշ մը կ'ըլլան նոր եղանակի ճակատին:

Ամբողջ բանաստեղծները զանոնք երգած են, ամբողջ ժողովուրդներ զանոնք կը սիրեն եւ կը մշակեն:

Շատ հին ժամանակներէ ի վեր կիները անոնցմով կը զարդարեն իրենց մազերը. կրօնքը՝ անոնցմով կը պնէ իր խորանները: Վէլլէտա պսակուած էր աղաւնիճներով (միցն չիչի) եւ ողիմպիական խաղերու յաղթականը՝ միմիայն դափնիէ պսակի վարձատրութիւնով մը կը հպարտանար:

Ծաղիկները բնութեան քերթուածն են կարծես: Զանոնք խառնուած կը տեսնենք մեր յիշատակներուն. անոնք պակաս չեն գրտնալիւր ո՛ր եւ է սիրտի ուրախութիւններու: Մանուկին օրօրանը անուշահոտելէ ետք՝ անոնք իրենց գրգանոյշ բոյրը կը տարածեն ծերունիին գերեզմանին վրայ:

Մեզմէ ո՞վ չէ փղձկած անգամ մըն ալ տեսնելով մեր անցեալէն սիրուած քանի մը միներինիկ ծաղիկներ. ո՞վ քաղցր արտօսներ չէ՝ թափած հանդէպ այն յուզումներուն՝ զոր անոնց բոյրը կը յիշեցնէ մեզի :

Ասիկա պատմութիւնն է որ պէտք չիկայ պատմելու :

Ամէն ատեն կը գտնենք խամրած ծաղիկի թերթ մը՝ գիրքի մը էջերուն մէջ մոռցուած : Այս թերթը քերթուած մըն է :

Տակաւին քսան տարեկան էինք. հազիւ կեանքի մէջ կը մըտնէինք : ամէն բան կ'երգէր, ամէն բան կը սիրէր մեր մէջ. եւ որչա՞փ երիտասարդ էինք, որչա՞փ կը սիրէինք :

Ո՞վ առաջին ուրախութիւններ հոգիի, մաքուր գինովութիւններ, քաղցր անձնիշխանութիւններ սիրտի մը՝ որ կը բացուի սիրոյ առջեւ. — ի՞նչ եղած էք հիմա :

Թաղամա՞ծ այս թերթին պէս...

Գարբուն էր ատի, եւ արդէն ձմեռ է եղած :

Եթէ ծաղիկները յիշատակին կը խօսին երբ մեռած են, այն ի՞նչ լեզու է իրենցը՝ երբ անոնք կ'ապրին եւ պճնուած են իրենց ամէնաճոխ երանգներովը :

Մանաւանդ շատ տրդեր ուր սկսած են զանի շրջապատել տեսակ մը պաշտամունքով. հազարաւոր հնարիմաց այլաբանութիւններ մտածուեցան կամ հնարուեցան հոն. ատեն մը՝ երբ թղթակցելու արուեստը տակաւին չէր գտնուած, Բարեւը(*) արդէն գործածութեան մէջ էր, եւ իբր գաղտնի լրարեր կը գործածուէր սիրահարներու :

Ծաղիկներու լեզուն կը ծնէր :

Անկէ ետք շատ մը եղանակաւորումներու ենթարկուած է ան :

«Նախ, կ'ըսէ հեղինակ մը, մեր հայրերուն անծանօթ շա՛տ մը ծաղիկներու պատճառաւ, եւ ետքը՝ անոնցմէ շատերուն յատկութիւնը աւելի լաւ ճշդութեամբ համար :

Սակայն պէտք չէ՝ կարծել որ հարկաւոր է գիտուն բուսաբան մը կամ միայն պսակաւոր ծաղկեմշակ մը ըլլալ : Թարգմանելու համար այն ամէն չքնադ բաները՝ որ կրնան ըսուիլ այս բարբառին մէջ :

Զգուշացէ՛ք, ըսած է իմպատուն մը, անոնցմէ՝ որ չէն սիրեր ո՛չ երաժշտութիւնը, ո՛չ ծաղիկները... Ասպարած սխալած է զանոնք ասեղծելով :

ԲԵՆԻ ԶԱՔՔՈՆ

(*) Ծաղիկներէ փունջ մը՝ որու մէջ գտնուող իւրաքանչիւր ծաղիկ՝ իմաստ մը կը յայտնէ. այսպէս կրնայ Թղթակցութիւն մը տեղի ունենալ՝ ծաղիկէ փունջերով՝ երկու հոգիի միջեւ :

ԳՈՂԸ

Շատ զարմանալի է, Պարոն, իմ ընելիք պատմութիւնս. պիտի վրդովուիք խուլ սարսուռով մը, թէեւ հոն պիտի չնշմարէք արիւնի բիծ մը իսկ:

— Պատմեցէք, Տիկին, պատմեցէք, ըսաւ երիտասարդը՝ սրտի դառն փլուզումով մը:

— Հոգեկան չարչարող տագնապներ կ'զգամ ամէն վայրկեան Օննիկի իմացական ոյժը կրկին և կրկին չկրնալ զարգացնելուս համար, սիրելի պարոնս, ըսաւ մայր Աննա: Իմացականութեան լայնութեամբն է որ միշտ կ'զգայ մարդ յստակօրէն, կրնայ քննել պատճառաբանել ու եզրակացնել: Իր ապրած կեանքը գարշ ըստորնութեան մէկ պատկերն է ամէնուս առջեւ պատկերուած: Չեմ կրնար այլ եւս արգիլել զայն հեռացնելու համար այդ սընականցնող կեանքէն: Հայրն էր պատճառը, հայրը, — այս խօսքերը, անգիտակից, շունչի մը պէս դուրս թռեր էին իր բերնէն — Սկիզբները, շատ հանգարտ կեանք մը կ'ապրէր: Ան իր կեանքի յուշատետրին մէջ գրած էր. « Եթէ մարդ ես, աշխատէ առանց տրոնջալու, էշ մը՝ որ կ'աշխատի անտրտունջ՝ աւելի բարձր է քան այն որուն դէմքը խոժոռ է դժգոհութեամբ »: Ուրիշ տեղ մը ըսած էր. « Երջանկութիւնը՝ պատուոյդ ու խղճիդ մէջ փնտռէ »: Այս սկզբունքները արտադրող միտքը, կը կարծէ՞ք որ անառակ մեծցուցած ըլլար իր որդին: Հայրն էր, հայրն է մեղապարտը: Մեռած է հիմա ան... Պէտք է յարգել մեռելներուն յիշատակը... բայց... երբէք ինձ նմանելու յուզում մը չնշմարեցի իր վրայ.. վստահ էի որ պիտի կերպարանափոխուէր եթէ խոնարհէր խօսքերուս առջեւ: Բարեպաշտիկ գաղափարներ կը ներշնչէի, մայրական համբոյր զգացումով մը գրգռուած, մեծ մեծ բաղձանքներով առլցուն. բայց, ամուսինս պզտիկ ժպիտներ կ'ուրուագծէր իր դէմքին վրայ ու կ'ընդմիջէր ամէն խրատ: Որդիս՝ Օննիկ, կը քաջալերուէր թոյն-ժպիտներէն, ու ծաղրուած կ'զգայի ինքզինքս, ծանր ու գարշ եզրակացութիւններ տողելով մտքիս մէջ: Փճանալու վրայ է հիմա ամբողջ հարստութիւնս: Հայրը իր գաւկին բարոյականի դահիճն եղաւ: Չեմ կրնար համբերել ալ, քանի որ փլած է բարոյական աշխարհը Օննիկի հոգւոյն մէջ:

Ու լացաւ մայր Աննա՝ պարտականութիւն մը սեպած ըլլալով լալ, խորհիլ ու մաշիլ պատասխանատուի մը գրաւուած նայուածքով:

* * *

Թեթեւ ու փայլուն երազներով կ'ապրէր Օննիկ, որուն թռու-
ցիկ գաղափարն էր՝ ապրիլ կեանքը իր բազմակողմանի գեղեց-
կութիւններով, ու բացարձակապէս դադարած էր աշխատելէ: Գե-
ղեցիկ էին իր սեւ աչքերը ու բարակ հով մը կ'անցնէր անոնց
վրայէն կարծես ամէն անգամ որ կը բացուէին անփութօրէն:
Խորհողի մը անկեղծ տպաւորութիւնը կը ներգործէր հոգւոյդ երբ
պարկեշտ շեշտ մը կը տեղաւորէր խօսքերուն մէջ: Բայց պէտք
էր քննել անոր մէջ ապրող «ես»ը, որ հիւանդութիւն մը: Ղառ-
նալու չափ խոշորցած էր: Գոցուած էր սիրտը ամէն մարդկային
զգացումի, ու մեռած էին սէրի զգայնոտ բարախումները իր մէջ.
մոռցած էր այլեւս իր մայրը:

* * *

Երազուած հեռանկար մը կը փլչէր Օննիկի գանկին մէջ, ու
ստորադառ համարուելու գաղափարը կը խենթեցնէր զինքը: Այս
յանկարծախա վայրէջքով՝ անօրինակ տագնապներու պիտի են-
թարկուէր: Փճացած էր ամբողջ հարստութիւնը, ու ինք հեշտա-
սիրական կեանքէն զզուած, սկսած էր ծախել գաղտուկ՝ ծանրա-
գին առարկաներ: Բայց ինքզինքը կը խաբէր: Իմացուած էր իր
գաղտնիքը, անհեղեղութեան ապացոյցներ կը դառնային իր առ-
ջեւ՝ ուրախութիւն և ծիծաղ: Այլ ամէն բան ոչինչ էր, կեանք եւ
երջանկութիւն վայրկեաններ էին իր առջեւ: Հեռացեր էին իր
բարեկամներն ու ընկերները՝ վշտի վայրկեաններուն: Յուսահա-
տութիւնը յսաւ կամաց կամաց սողոսկիլ անոր հոգիին մէջ, ու
ու գիշերուան խորհող լռութեան ներքեւ, կոկսէր նոր նոր ծրա-
գիրներ հիւել իր երիտասարդի աշխուժով: Խղճմտանքի նոր զարկ
մը արթնցած էր իր կուրծքին ներքեւ: Խորհուրդներով գինով-
ցած իր միսքը՝ ցնցուեցաւ յանկարծ հեռուէն երկնցող կոչնակին
զօղանջին: Իուրս ելլելով կորսուեցաւ մութին մէջ եկեղեցին ող-
բալու գացող սգաւոր կնկան մը նման:

Լացին գիշերն էր: Մթալոյս խորհրդաւոր եկեղեցիին մէջէն
սուրբ սարսառ մը կ'անցնէր ու պաղ հովի մը պէս կը սահէին չա-
րականներու խորհրդաւոր ձայները իր ժանգոտ զգացողութեան
վրայէն: Այծաթեայ խաչերուն վրայ էր գամած իր նայուածքը,
ու մէկ խորհուրդ մը կ'անցնէր իր մէջէն, գողնալ այդ խաչերը,
թերեւս ասոնցմով կրնար իր խորհուրդները իրագործել:

Ժամերգութենէն վերջն էր որ գողցաւ Օննիկ բոլոր խաչերը՝ անհոգի մարմին մը դարձած, առանց վախի մը սարսուռը զգալու իր մարմնոյն վրայ:

* * *

Օննիկ, ոճրագործի մը տագնապած հոգին կը կշռէր իր խըղճին վրայ: Նոր գաղափարներ սկսեց էին աճիլ իր զգացողութեան մէջ. իսկից մ'իւրեւեմ, հարցուց ինքնիրեն զարմացկոտ նայուածքով մը. ինչո՞ւ... եւ այն ատենն է որ բան մը կորսնցուց Օննիկ իր մէջէն. յիմա՛ր:

* * *

Պարզ գիշեր մըն էր բարակ լոյսով մը ծփուն: Մայր Աննա, գեղազարդ սենեակի մը մէջ մտախոհ կ'սպասէր իր որդւոյն: Լուսինը իր լոյսով կը լեցնէր իր սենեակը, ուր մայր Աննա կը չարձարուէր, կը չարձարուէր մարեցնող խորհուրդներով: « Դո՛ւն էիր, դո՛ւն, պուռաց ինքնիրեն, խենթի մը պէս: Օննիկս ասանկ դառնութեանց մէջ չպիտի հեծէր հիմա. Դո՛ւն էիր որ պատրաստեցիր իրեն անբարոյական ապագայ մը, եթէ խոնարհէիր՝ պիտի խոնարհէր Օննիկս ալ քեզի համակերպած, բայց անգիտակից անբարտաւան մը եղար. ծաղրեցիր, որպէս զի ծաղրուիս, ընտանիքդ ծաղրուի. Ահա իրական մէկ ապացոյցը, անուանարկուցանք, զիս իսկ մեռցուց ժողովուրդը բարոյականով: Ո՞վ է յանցաւորը, ելիր գերեզմանէդ. եւ նայէ անգամ մը զորս դիդ, տե՛ս, ինչե՛ր, ինչե՞ր կը տեղան մեր ընտանիքին փառաւոր յարկին վըրայ: Ո՞ր շրթները պիտի մըմնջէ արդեօք, « Օրհնեայ ըլլայ յիշատակդ »: Կինդ է քու յիշատակդ չարձարողը:

Ժամը հինգը զարկաւ, եւ դեռ մայր Աննա կ'սպասէր անձկանօք իր որդւոյն. երբ յանկարծ դուռը զարնուեցաւ. Օննիկն էր:

Առաջին նայուածքով, « Հիւանդ եմ, մայր », մըմնջեց Օննիկ ճնշող ցաւ մը զգալով իր կործանած կուրծքին ներքեւ:

* * *

Աւագ Ուրբաթ գիշեր, մինչ պահապանը կը հսկէր գերեզմաննոցը՝ արթուն հետաքրքրութեամբ մը, երկնային մարմնոց մէջ բան մը փնտռող թափառիկի մը հետաքրքրութեամբ, ստուերի պէս բան մը նշմարեց, որ կը մօտենար երթալով: Տերեւերուն տակ թափչող թռչունի մը նման, կծկտեցաւ դողդոջուն մարմնով: Բանի մը քայլ հեռուն կեցաւ երիտասարդը՝ հորին քով, ու արծաթի հնչիւններ լսուեցան: Պարկ մը ունէր երիտասարդը իր վե-

բարկուն տակ ծածկած, դուրս հանեց զայն, եւ հորին մէջ ձեռքեց աճապարանքով: Խուլ ճողորին մը լսուեցաւ միայն: Երիտասարդը չուարած կարծես, կասկածոտի մը շարժումներով հեռացաւ:

Պահապանը ճանչցած էր զայն:

* * *

Օննիկն է եղեր խաչերուն գողը, իմացուած էր ամէն բան: Գերեզմաննոցի պահապանը տարածեր էր այս լուրը: Փողոցի լաճերը ու ամէն սիկարեան՝ գո՛ղը, գո՛ղը կը պոռային երբ կ'անցնէր փողոցէն Պ. Օննիկ:

Ատաբազար

ԿԱՐԷՆ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԿԱՆԵԱԼ ԿԱՄՈՒՐՋԻ ՄԸ ՀՐԴԵՀԸ

Նիւ-Եօրքի բուն քաղաքը՝ Պրուքլին արուարձանէն բաժնուած է լայն գետով մը Էսթ Րիվըր: Այս երկու կէտերու միջեւ հաղորդակցութիւնը այնքան խռնուած է, կառքերու, հանրակառքերու, հետի գացողներու անցուղարձը այնքան խիտ է որ, քաղաքատեղութիւնը ստիպուեցաւ ուրիշ ճամբայ մըն ալ հնարել. որոշուեցաւ երկրորդ կամուրջ մը եւս ձգել առաջին կախեալ կամուրջին քով: Երկու եղբրքներուն վրայ երկուքական ահագին քարաշէն սիւներ հաստատեցին՝ որոնց վրայէն պիտի անցնէր զոյգ երկաթեայ թելերը. այս գուգահեռական թելէն կը կախեն կամուրջին տախտակամածը: Աւելորդ չէ ըսել թէ այս մետաղեայ պարանները՝ որոնք գլեթէ գեր մարդու մը դաստակին հաստութիւնը ունին՝ ձեւացած են պարզ կանեփի ջուաններու պէս, ոլորուած երկաթի բարակ թելերէ, ժանգոտելէ զերծ պահելու համար կպրախառն նիւթի թանձր խաւով մը կը ծածկեն վրան:

Կամուրջին շինութիւնը՝ Պրուքլինի կողմը գրեթէ ամբողջովին աւարտած էր, իսկ դիմացի կողմէն ալ պղտիկ մաս մը միայն կը մնար աւարտելիք, երբ հրդեհ մը ոչնչացուց այդ ահագին աշխատութիւնը:

Ինչպէս ըսինք, կամուրջին տախտակամածը՝ որու վրայէն պիտի անցնին մարդ, կառք եւն. կախուած է երկու գլխաւոր

պարաններէն՝ հաստը մետաղեայ թելերու միջոցաւ . բոլոր մասերը իրենց տեղը անցած , կուպրով ծեփուած եւ ներկուելու վրայ էին . չորս քարաշէն սիւներուն վրայ ալ , իրր միջեւանոց , փայտաշէն ծածկոյթներու տակ կը գտնուէին ահագին քանակութեամբ կտաւատի իւղ (պէղիւր եաղը) , կուպր , կոմ լաքի ջնարակ , ամէնքն ալ դիւրաբորբոք նիւթեր : Իրիկուան ժամը 12ի ատեններն էր երբ հրդեհը ծագեցաւ և փչող սաստիկ հովին ազդեցութեամբ արագապէս ամէն կողմ տարածուեցաւ : Բոլոր մետաղեայ պարաններն ծածկող նիւթերը բռնկեցան , և յառաջ եկած տաքութիւնը այնքան սոսկալի էր որ գրեթէ բոլորն ալ խզուեցան և կամուրջին տախտակամածը կտոր կտոր փլչելով ջուրը ինկաւ : Երկու գլխաւոր պարանները վերցնող չորս քարէ սիւները՝ մէյմէկ ճիւղալային ջահերու պէս իրիկուան մութին մէջ գալարող բոցերու հսկայ փունջ մը կ'արձակէին : Շոգեշարժ ջրհանները անմիջապէս հառան բայց կամուրջին հրդեհուած մասերը գրեթէ հարիւր մէթր բարձր կը մնային և մինչեւ հոն ջուր հասցնելը դժուար էր . ասկէ զատ հրաշէկ հալած մետաղի գունտեր կարկուտի պէս վար թափելով մարած տեղը նորէն կը բռնկցնէին :

Կամուրջին շինութեանը ձեռնարկող ընկերութիւնը շատ հոգ կ'ընէր թէ չըլլայ որ երկու գլխաւոր պարանները փաստուին , որովհետեւ անոնք վերցնելով տեղը նորը դնելու համար առնուազն մէկուկէս տարուան աշխատութիւն պէտք է , առանց հաշուելու դրամական կորուստը : Բայց գոհութեամբ տեսնուեցաւ որ անոնք միայն երեսէն քիչ մը փնասուած էին և իրենց առաջուան տոկունութիւնը կը պահէին : Հիմայ , խնդիրը կը մնայ նոր տախտակամած մը հաստատելու և գործը առաջ տանելու : Ամբողջ կամուրջին ծախքը որ 5-6 միլիոն Օսմ. ոսկիի համարժէք գումար մը հաշուըուած էր , կէս առ կէս աւելցած է , սակայն տուժողը ապահովագրական ընկերութիւններն են , որովհետեւ , Լամբրիկայի մէջ շինուելու վրայ եղող կամուրջներն ալ ապահովագրողներ կը գտնուին :

ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ



Ա. ԱՐՅՈՒԱՐԷ

Ք Ն Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ր Դ Ի Ի Ն Ք Ը

Ուրախ ենք որ այսօր կրնանք հաղորդել մեր քննութեան արդիւնքը, որուն, ինչպէս շատեր իմաց տուին մեզ՝ գրով ու բերանացի, անհամբեր կ'սպասեն: Ուրախ ենք դարձեալ՝ որ մեր յուսացածէն շատ աւելի ստացանք շարադրութիւններ, բայց եթէ քանակի մասին դժգոհութեան առիթ չունեցանք՝ երբեք, նոյն բանը չպիտի կրնանք ըսել, դժբաղդաբար, որով մասին: Այն փոյթը զոր ցոյց տուին մեր փոքրիկ բարեկամները պատասխանելու մեր հրաւերին, գովելի բան մըն էր արդարեւ, ոչ մենք կը գովենք զիրենք այդ բանին համար: Բայց այդ հապճեպ եռանդը բոլորովին օգտակար եղած չէր իրենց համար: Մեր պայմանաժամը պէտք եղածէն աւելի երկար էր, ու մենք այն յոյսն ունէինք թէ կարելի էր լաւագոյն բաներ արտադրել այդքան ժամանակամիջոցի մը մէջ:

Այս ընդհանուր ակնարկն ընելէ վերջ, կը մտնեմ մանրամասնութեանց մէջ:

Կը խնդրեմ որ մեր այս դիտողութիւնները չվշտացնեն զանոնք՝ որոնց կը պատկանին. բարեկամական եւ ընկերական դիտողութիւններ են ասոնք՝ մատնանշուած, կէտերը ապագային կրնան ուղղուիլ տակաւ առ տակաւ՝ աշխատութեամբ, Հետեւաբար՝ ան որ նուազ բարեբախտ կը գտնուի այսօր, երբեք պատճառ մը չէ անիկա լաւադոյն բախտերու չտիրանայ, եթէ, ինչպէս կ'ըսուի սովորաբար, կալմբ ընէ: Ձեզ ալ, փոքրիկ բարեկամներս՝ ընկերներս, այդ բանը պէտք է. աշխատեցէք ուրեմն:

Հիմա կուգամ բուն կէտին:

Առաջին դիտողութիւնը զոր կ'ուզեմ ընել, սա է թէ շատեր առանց նիւթին կատարելապէս տիրանալու, սկսած են գրել, կարծես ըստ բախտի, կ'ասոնք, առօրեայ թերթի մը խմբագրի մը պէս, որ ստիպուած է օրական երկու երեք սիւնակ նիւթ հրամցնել — թղթեր լեցնել: Ո՛չ, կ'զգուշացնեմ զձեզ՝ այդ բանէն, գրեցէք, ու դարձեալ գրեցէք, ծրագրի մը համեմատ, զոր դուք կը գծէք ձեզի համար, կամ պատրաստ ծրագրի մը վրայ, ինչպէս կար հոս:

Երկրորդ դիտողութիւնս լեզուական կէտի վրայ է. օ՛հ, Աստուած իմ, անհանդուրժելի բաներ են, ընկերներս, այն քերականական բարբարոսութիւնները՝ զորս չէք խղճացեր գործելու: Իրաւ է որ կատարեալ բան մը սպասելու իրաւունք չունինք,

բայց ասոնք այնպիսի սխալներ են և ատոնց համար է իմ խօսքս ալ, որք ներելի չեն ձեր հասակի տղոց համար: Սոսկալի կիրարկումներ «որ» յարաբերականով: մէկը կը գրէ: «Անտառը ընդարձակ վայր մըն է, որ կը գտնուի լեռան վրայ, որ շատ ծառեր կ'ունենայ. եւ որ կը տեսնուի թէ մարդիկը, այսօր հոն կուգան հանգչելու...»: Հէ՛, չարածճի բարեկամս, խորթութիւն մը չե՞ս զգար կարգաւով, իսկ ես պիտի ըսէի քու տեղդ. — Լեռներու վրայ, սքանչելի, ընդարձակ, ծառախիտ (հարկ չկայ իսկ այս բառերուն) վայրեր են անտառները, ուր մարդիկ կ'երթան հանգչելու (?)»: Այս խորթ ու անհարազատ ձեւաբանութիւններէն զատ, դիտելի կէտ մըն է նաեւ հոլովներու սխալ գործածութիւնը. — Գրեթէ բոլորն ալ քիչ թէ շատ ունին այս թերութիւնը. Ոմանք կը գրեն. «Անտառ, որ կը տեսնենք», փոխանակ ըսելու «Անտառը զոր կը տեսնենք» և Նոյնպէս «Անտառը զոր կ'երթանք»: փոխանակ ըսելու «Անտառը ուր կ'երթանք»:

Մեր փոքրիկ բարեկամները լաւագոյն բացատրութիւն մը գրտնելու հապճէպին մէջ ինկած կը թուին այս սխալներուն մէջ. եղբայրական յորդոր մը այս աթիւ. գրեցէք այն բանը միայն, զոր լաւագոյն գիտէք: Վերջապէս տեսաք որ շատ յաճախ գործածուած սխալներէ մէկն է ՈՐ յարաբերականի սխալ կիրարկումը: Սա փոքրիկ դերանունը սքանչելի տարր մ'է ճշդութեան գրուածքի մէջ, եթէ սակայն լաւ գիտցուի կիրարկել: — Ինչո՞ւ կ'ըսէք. «Անտառները որոնք կը տեսնենք, կամ զոր կը տեսնենք» եւ ոչ զորս: Ճշմարտութիւնը՝ ամէն բանէ առաջ:

Գ.) Մեր բարեկամներէ շատեր սիրահար մը ըլլալ կը թուին պերճաշուք բացատրութիւններու, բառերու, ասացուածներու, ոմանց քով նոյն իսկ հիւանդութիւն մըն է եղբր կարծես: Կը գովեմ անոնց բառակրկիտի այս եռանդը, բայց պէտք չէ չափազանցել, ու մանաւանդ՝ անոնց իմաստը լաւ հասկնալէ վերջ միայն դնել իր պատշաճ տեղը, որուն շատեր չեն յաջողեր, ապա թէ ոչ՝ գրուածքը ո՛չ միայն փափաքուած ազնուութիւնը չունենար, այլ կը տափակնայ, կ'անշքանայ և անհամ բան մը կը դառնայ:

Դ.) Մակակէտի գործածութեան ուշադրութիւն չէք ընէր, սիրելի պարոններս, ու մանաւանդ դուք Պրն. Վահրամ Գարագաշեան, որ բաւական կոկիկ կը գրէք: «Զ»ի քով ան ատեն միայն կրնաք մակակէտ դնել երբ «Զի» կրճատում կայ. Օրինակ. Զ'ուտէր. — այսինքն Զէ ի ուտել: — Այս մասին կրնաք նայիլ ձեր ֆերականութիւնները. չեմ երկարեր:

Ե.) Զգուշացէք աւելորդաբանութիւններէ, երկարաբանութենէ, բացազանջութիւններէ — տափակութիւններ են ասոնք:

Գրուածք մը այսպէս կ'սկսի. — « Քանի՞ն, գեղեցիկ է անտառը, քանի՞ն գեղեցիկ, քանի՞ն, ևլն... » : Ի՞նչ հարկ. թող ձեր գըրուածքը ըլլայ կարճ, որոշ, եւ հաճոյքով պիտի կարդացուի :

Ասոնք այնպիսի դիտողութիւններ են, զորս միշտ կը լսէք բայց, դժբախտաբար կը տեսնեմ որ դեռ միշտ կրկնել պէտք պիտի ըլլայ : Յուսանք որ յաջորդ Մրցումին, ա'լ աւելի պատասխաններ կ'ստանանք — թող Աստուած ալ համբերութիւն տայ ինձ կարդալու — բայց մանաւանդ, սիրելի փոքրիկ բարեկամներս, ազատեցէք զիս այս անտանելի սխալներէն :

Հիմա կ'ուզէք որ անունները տամ շահողներուն. ահաւասիկ.

Առաջին Մրցանակ

ՍՐԱՊԼԻՈՆ

Երկրորդ Մրցանակ

ՀԱՅԳ Մ. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

Երրորդ Մրցանակ

ՇԱՄԱՆԴԱՂ ԵՎ ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Առանձինն իմ դիտողութիւններս ըրած եմ արդէն անոնց, կը շնորհաւորեմ պիտենք իրենց այն յաջողութեան համար եւ կը մաղթեմ որ նոյն յաջողութեամբ պսակուին յաջորդ անգամներուն՝ մեր բոլոր պզտիկ բարեկամներն ալ :

Իմ մասնաւոր շնորհաւորութիւններս Ադրիանուպոլսեցի այն տասներկու տարեկան Օրիորդին, որ բաւական սիրուն բան մը զրկեց մեզ : Ա'լ թերթին Տնօրէնին կը թողում բացառիկ բան մը ընել իրեն համար (*) :

Եթէ կ'ուզէք, իբր վերջաբան, պզտիկ լուր մըն ալ տամ ձեզ : « Հանրագիտակ » նոր էջ մը կը բանայ աղէկ գրելու մասին պատուէրներ պարունակող : Կտորներ պիտի հրատարակենք նաեւ թարգմանաբար Պուալոյի « Արուեստ Քերթողական » էն :

ՊԱՐՈՅՐ Բ. ՔԷՉԵԱՆ

(*) Պարոյր Էֆէնտիի թելադրութեան վրայ Ազնիւ Օրիորդին կը նուիրենք մէկ օրինակ Հանգիստաբան :

Տեղւոյ անձկութեան պատճառաւ՝ յաջորդ թիւով պիտի հրատարակենք Ա. Ե. Մրցանակ առնողներու գրութիւնները :

Գ. ՄՐՅՈՒՄ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ա Ռ Ո Ւ Ա Կ Ը

Նոյն ծրագրով, անշուշտ հարկ եղած փոփոխութիւններն ի նկատ առնելով, որով գրեցիք « ԱՆՏԱՌ » ք :

Պայմանաժամ մինչեւ Ապրիլ 15 : Ծրագրին հետ նոյն կը պահենք նաեւ պայմանները :

Խորին ցաւով կը ծանուցանենք Մեծ. Յովհաննէս էֆ. ձիվէլէկեանի մահն՝ եղբայր մեր Ազն. պաշտօնակից Տիգրան էֆէնտի ձիվէլէկեանի, տէր եւ եւ տնօրէն ձերիսի Շարգիի եւ Սուրհանդակ օրաթերթերու:

Հանգուցեալն որ հեզահամբոյր բնաւորութեան տէր եւ ամէն կարգի ազգայնոց սիրելի ու համակրելի էր՝ բաւական ժամանակէ ի վեր թողլով իր սեղանաւորական ասպարէզն, կը վարէր իր Ազն. եղբոր երկու օրաթերթերուն վարչական ճիւղն օրինակելի կարգապահութեամբ:

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ Զորեք-շաբթի օր՝ Թաքսիմի Ս. Յովհան Ոսկերերան եկեղեցին:

Մեր խորին ցաւակցութիւններն հանգուցելոյն Ազն. եղբոր և համայն պարագաներուն:

“ՄԱՆՁՈՒՄԷ,,Ի ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿԸ

Ֆռանսայի բնապաշտ վիպասան էՄիլ ԶՈԼԱՅԻ վէպերէն եւ ոչ մէկը Հայերէնի թարգմանուած էր ցարդ: Մանգումի էֆէնար Հայաթերթը առաջիկայ Երկուշաբթիէն սկսեալ իբր թերթօն պիտի հրատարակէ էՄիլ ԶՈԼԱՅԻ խիստ հետաքրքրաշարժ եւ խիստ յուզիչ մէկ վէպը՝ ԹէՐԷԶ ՌԱՔԷՆ:

Մեր Պաշտօնակցին այս ձեռնարկը գնահատելի նորութիւն մըն է, քանի որ անոր շնորհիւ Հայ հասարակութիւնը պիտի ծանօթանայ մեծ մտքի մը արտադրութիւններուն և առիթ պիտի ունենայ անձամբ դատաստան ընել թէ՛ ի՞նչ կ'արժէ Բնապաշտ գրականութիւնը եւ թէ գրելու ի՞նչ ո՞ճ ունի ԶՈԼԱ որ՝ երբ Ընթերցողներու մէկ մասէն կը փառաբանուի, միւս մասէն ալ նոյնչափ կը քննադատուի:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

Ն Շ Ա Ն Կ. Պ Է Ր Պ Է Ր Ծ Ա Ն Ի

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԵՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
Ն Շ Ա Ն Կ. Պ Է Ր Պ Է Ր Ծ Ա Ն

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 33, Իզտաւ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 տետր զատ առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպաղեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան

Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան

Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան

Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման

Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան

Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեսաբիա, Երուանդ էֆ. Երկաթեան

Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր

Հալեպ, Ս. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան

Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան

Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկովրդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան

Պարսիգալ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան

Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլէրեան

Սիւմ հանձի՛քէոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր Բօքրի » » »

Տիարպէփի, Լեւոն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգինը և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոյժ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակադրոյժ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք:

Հատը 30 փարայ